

# ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆ



այ գրականության զարգացման պատմության մեջ նշանակալից դեր է խաղացել ոռու գրականությունը, որին հայերիտասարդությունն սկսել էր ծանոթանալ դեռ 1820-ական թվականներից: Եղ հենց այս 20-ական թվականներից մեր իրականության մեջ մի նոր ու թարմ հոսանք առաջացավ, որը նախնական մի փորձ էր ոռու և ելորպական գրականության, ֆրանսիական լուսավորիչների գաղափարների աղբեցության տակ ճեղքիլու հին գրականության կաշկանդիչ սահմանները և գրականությունը գուրս բերելու դեպի կյանք, դեպի մարդը, դեպի լուսավոր գաղափարների աշխարհը:

Այդ շարժման առաջին երկու ներկայացուցիչներն էին Հարություն Ալամդարյանը և Մեսրոպ Թաղիադյանը: Ալամդարյանից հետո Թաղիադյանը մեր մտավոր վերածնության ավելի ուշագրավ ներկայացուցիչն է: Նրա ստեղծագործություններն իրենց վրա կրում են XIX դարի 30—40-ական թվականների հայ հասարակական կյանքի ազդեցությունը:

Այդ ժամանակաշրջանում հայ պատմության մեջ գարձակետ էր սկսվում դեպի ոռու առաջան և ելորպական միտքը: Այդ դաշտակետն ըստ էռության սկսվեց Ալամդարյանով և ապա Թաղիադյանով:

Թաղիադյանը հանդիսացավ ավելի ուշագրավ դեմք, ավելի ստեղծագործ միտք և դրա հետևանքով նախորդից ավելի շատ հալածվեց:

Մեսրոպ Թաղիադյանը ծնվել է Երևանում, 1803 թվին: Նրա մանկությունը եղել է դառնու անհրապույրի Զրկվել է Հարազատ Հորից և ենթակա է եղել մոր դաժան վերաբերմունքին: Մայրը տասներկու տարիկան Մեսրոպին ուղարկում է Էջմիածին՝ ժառանգավորաց դպրոցում:

Երբ 1821 թ. Եփրեմ կաթողիկոսը պարս

կական փշխանությունից հալածված փախչում է ոռուական սահմանը, իր հետ ունենալով եպիսկոպոսներու ու միաբաններ, արդանց հետ միանում է նաև Մեսրոպը:

Թաղիադյանը Հին Նախիշեանում ընդունում է սարկավագության աստիճան և շարունակում ճանապարհը նրանց հետ մինչև Հաղպատական:

Այստեղ կաթողիկոսից հանձնաբարական նամակ ընդունեցվ Հնդկաստանում գտնվող Պողոս եպիսկոպոսի անունով, Թաղիադյանը Փարսկաստանի վրայով ուղևորվում է Հնդկաստան:

1823 թվին նա հասնում է Կալկաթա: Պողոս եպիսկոպոսը այդ ժամանակի գոտնվում էր Դաքա քաղաքում: Թաղիադյանն ստիպված այցելում է և Դաքա քաղաքը, որտեղ հանդիպում է եպիսկոպոսին:

Հանձնաբարական նամակը նրան հանձնելով Թաղիադյանը նորից վերադառնում է Կալկաթա և մտնում Հայոց մարդասիրական ճեմարանը: Այստեղ Թաղիադյանը Աբրահամ ծ. վարդապետի միջնորդությամբ ընդունվում է Հիբրիի անդիշեական բարձրագույն դպրոցը անգելերն սովորելու նպատակով:

Այստեղ նա մնում է շուրջ չորս տարի: Ընդարձակվում է նրա մտահոգիկոնը, սովորում է զանազան գիտելիքներ. նա սովորում է նաև պարսկերեն, Հոմեարեն և լատիներեն:

Թաղիադյանն այնուհետև սկսում է զրադշել թարգմանություններով: Թարգմանում է գրքեր լատիներենից և անգլերենից հայերեն: Առաջին հերթին նա թարգմանում է Ռիզնակ Հիբրիի «Պայեստին» գրվածքը:

1828 թվին, Երբ ուռուական զորքը գրավեց Երևանը, Թաղիադյանը մի ընդարձակ նամակ ուղարկեց իր համաքաղաքացիներին՝ Երևանցիներին:

Այս կարևոր փաստաթուղթը վկայում է Թաղիադյանի ոռուական օրինատացիան և այն մեծ հույսին ու ակնկալությունները, որ նա կապում էր Հայաստանի նվաճման հետ Թուռաստանի կողմից: Այդ նամակում

թաղիադյանն իր համաքաղաքացիներին խորհուրդ էր տալիս երևանում մի դպրոց բանալ, որ երեխաները ողատարկ քուշերում ման չգան:

Սակայն Թաղիադյանի նամակը, դժբախտաբար, մնում է անհետևանք: 1831 թվին նա վերադառնում է Եջմիածին: Այստեղ նա ստանձնում է վանքի ժառանգավորաց դրաբոցի ղեկավարությունը, որտեղ, սակայն, երկար ժամանակ շի մնում: Նա կրկին հաստատվում է Կալվաֆայում և իրեն նվիրում գրականության. թարգմանություններ է անում, կազմում է դասագրքեր, այլ և այլ ձեռնարկներ, գրում է շափածու գրվածքներ, վեպեր, սկսում է հրատարակել սկզբում «Ազգական», ապա՝ «Ազգական» Արարատեան լրագիրը:

1857 թվին նա նորից ճանապարհվում է դեպի Պարսկաստան՝ նոր Զուլայում ուսուցչաթյուն անելու նպատակով: Սակայն դեռ շհասած նոր Զուլա, ճանապարհին, Շիրազ քաղաքում 1858 թվի հունիսի 10-ին վախճանվում է Հայրենիքի անկախության ու ազատության տեսչը սրտում:

Թաղիադյանի գերեզմանի վրա փորագրված է հետևյալ տապանագիրը.

«Մեսրոպ Դավթեան Թաղիադյան,  
Պերճ վարժապետ, մեծ գիտնական,  
Վսեմ քերթող մատենագիր,  
Հանգիստ առնու այս թուի դամբան:  
Ջեղ Հայոց գիտնոց կաճառ  
Պատվասիրէ միշտ սիրավառ.

Ես նոր Զուլա և Կալկաթա

Ոչ մոռացին գրեթե իսպառու:

Թաղիադյանը բարի իսկական իմաստով լուսավորիչ էր: Նրա միակ նպատակն էր լուսավորել Հայ ժողովուրդը, դպրոցներ բանալ, լրագիր հրատարակել, գրեր տպագըրել, գիտություն տարածել:

Թաղիադյանը որպես մանկավարժ նրեխսաների համար կազմել է իր ժամանակի համար շատ արժեքավոր այբբենարան՝ «Մեսրոպեան այբբենարան» անունով:

Բացի վերը նշված մասնագիտությունից Թաղիադյանը նաև պատմագիր էր: Նրա միակ նպատակն էր այսպիսի այլ գրեթե անհրաժեշտ գրքեր հայացած մի համար, ուստի այսպիսի գրքեր հայության մեջ առանձին արքեք ունի:

Այստեղ Թաղիադյանը նկարագրուած է Եջմիածինը, նրա ներքին կյանքը, միաբանության անդամների հարաբերությունները, ցանքը ու ինտրիգները: Իրար դեմք: Այս գրքի մեջ է, որ Թաղիադյանը հանդիս է գալիս ճորտատիրության դիմ:

Նա ապրել է որոնուանեներ, երազանքներ:

Աշխատել է լուծում տալ մեր ժողովրդի ազատագրման հարցերին և այդ լուծումը նա տեսել է Հայրենասիրական ազգային շարժման և լուսավորության մեջ:

Այստեղից էլ նա, որպես առաջավոր իդեալների արտահայտչ, հանդիսացել է 30-րդ թ. թ. լուսավորիչներից մեկը:

Թաղիադյանը ցուց տալով, թե ելքովացիները որքան մեծ առաջադիմություն են կատարել գիտության ու արվեստի մեջ և Հայերի որքան նետ են մնացել, առաջարկուած է թոթագիր հինը և հետևել նորին, լուսավորության: Այստեղ լսվում է արդեն մի շատ ժամով ծայն, կարծես Արովյանն է խոսում: «Ա՛խ, ի՛մ լաւ քաղաքացիք, ա՛խ հոգիս հարաց կանչում, հին վամբրն թողեք, նոր, ազգի լուսավորութեան և պայծառութեան հետևեցիք»..

Թաղիադյանը տիրությամբ է խոսում Հայ կնոջ մասին, որն իր մայրենի լեզվում բացի ոչ մի օտար լեզու չի փմանում: Սակայն, ընդհակառակը, նա հիացմունքով է խոսում անգիտացի և Գրանսիացի կանանց մասին, որոնք 6-7 լեզու կարդալ գիտեն, իսկ Հայ կինը նոյնիսկ զգիտե գրել, կարդալ իր մայրենի լեզվով:

Ահա այս առիթով է, որ Թաղիադյանը իր «Սիրել Սիրվարդ» բանաստեղծության մեջ ասում է.

— Ասա, ափսոս որ կարգալ չես գիտում, Սիրածի գրածն սրտում չես գրում, Քեզ նամար պատրաստ է ազնի:

գիտութիւն

Եթէ զուտ կամենաս իրաց գտանենք:

Թաղիադյանի ազգային ստեղծագործություններից քաջ հայտնի է, ոչէր կեցոյ ու զայսյա բանաստեղծությունը, որը շատ վաղուց երգվում էր ժողովորի մեջ:

Այս բանաստեղծության մասին հիացմունքով է արտահայտվել մեծ դեմոկրատ Միքայել Նալբանդյանը:

«Եթե նաքր ունենայի ես, ամենասուրբ պարտականություն կդնեի ամեն մի հայի վերա, անգիր ուսանեթու այս երգը: Մինչև այսօր իմ կյանքի մեջ չեմ տեսած կամ լսած մի այսպիսի ներգ. ահա բուն ազգային երգ: Ենք զն Թաղիադյանց. խաղաղություն քո հոգուն, շարշարվեցար, շարշարվեցար ազգի լուսավորության համար, բայց շհաջողվեցավ քեզ, որպես և շատերին, տեսանել քո մարգարեական ազգու քարոզության պտղաբորությունը մեր ազգի մեջ: (Երկնիր 1 «Մեսրոպեան արցուկա-ի ծանոթություններից):

Թաղիադյանը սիրել է աշխատավոր ժողովրդին, հայ շինակամին: «Սոս և Սոնդիպի պոեմում նայ ասում է,

«Ենդ հիւղ աղբատին»

Առամել հանիմ

Քան ընդ արքունիս

Տաներան բացին.

Մարդ քանի պարզ կեայ,

Անի սէր նորա:

Բայց ընդ նոխուրեան

Ոխն յամելանայ»:

Թաղիադյանը սիրել է ժողովրդական բանահյուսությունը, ֆոլկորը, նաև սիրել է ժողովրդական կարճ ու սրամիտ առածներն ու ասացվածքները: «Սոս և Սոնդիպի»-ի մեջ նույնպես գործ է ածել ժողովրդական առածներ ու ասացվածքներ: Ահա մի տեղ նա գորում է.

«Այլ փորձոյն բողի

Առնել խելացի.

Բայց զի՞նչ խեին նառ

Կամ սկին օնառ»:

Այս տաղերը, անշոշաւ, թաղիադյանը վերցրել է ժողովրդական բանահյուսությունից:

Թաղիադյանը խստություն չէր դնում հայի և օտարի մեջ, և սա նրա համար աշխարհայացք էր: Սոս և Սոնդիպի, հայ և հնդկուհի: Երկու տարբեր ազգ, երկու տարբեր կրոն: Նա այն համոզումն ունի, թի սերը աղջության և կրոնի տարբերություն չլ ճանաչում: Այն հարցին, որ արվում է Սոսին, թի դու հայ, նաև՝ հնդկուհի, ի՞նչպես կարելի է սիրել միմյանց:

«Ազգ ազգի ներիակ,

Աղանդ՝ աղանդոց»...

Սոսը պատասխանում է.

«Երբ սիրա ընդ սրտի

Սիրով շալկապի,

Ոչ ազգ, ոչ աղանդ

Անդ ունի զտեղի»: (էջ 103).

Թաղիադյանը ցավով է խսում այն բանի մասին, որ հայեր, այն էլ հայրենասեր հայեր շատ կան, բայց դժբախտարար նորանք մնում են տառապանքի մեջ.

«Հան երկինս զթել, զՇամիրամ, զԱղեք-սանդր, զԱրտաշիր Սասանեան, զՅազկերստ, զԹեմովրլանկ, զԱրքաս Մեծ և զՆադիր Շահ խուժադրութ արենարու զօրօք իւրեանց: և ահա անմարմին հրեշտակը, անքամ զարհութեալք, յահէ նոցա երկիր թօթափին. այն ինչ Հայք, այն՝ հայրենասէր Հայք տակափն կան և մնան տառապանօք ի հողս հայրենեաց իւրեանց»:

Խոսելով իր ապրած ժամանակաշրջանի, իր ապրած դարի մասին թաղիադյանն ասում է.

«Այս դար արուեստից դար է, և ոչ բըռնութեան: Այն ինչ այլք միայն արուեստ ունի կարեն և զնիւթ արուեստին յալլուստ հայթայթեն, մեք գրեթէ գամենայն պատրաստի ունիմք յաշխարհի և ի տան մերում»...

Թաղիադյանը հիացմունքով է խոսում ուսուների մասին, որովհետեւ նրանք ազատագրեցին Հայաստանը և Երևանը պար-սիկների լծից:

Նրա աշխարհաճայացքի մեջ սերը դեպի ուսուները, ուսւազատանը ժողովուրդը, հայ ժողովորի մեծ բարեկամ ժողովուրդը, — փաստ է:

Թաղիադյանի ստեղծագործությունների մեջ առաջնակարգ տեղ է գրավում «Սոս և Սոնդիպի» պոեմը: Ոչ միայն լեզվով, այլև կառուցվածքի մի քանի առանձնահատկություններով պոեմը հորինված է գասական գրվածքների հետևողությամբ: Այդ իմաստով նրան պիտք է գասել հայկական կլասիցիզդիներկայացուցիչների շարքը: Սակայն կամ ուրիշ կողմ, որ թույլ չի տալիս այդ գործն ամբողջությամբ կլասիցիզմի արտահայտություն համարել դա նրա բովանդակությունն է և այն հարցերը, որ արծարձված են պոեմում: Պատելով կլասիցիզմի կաշկանդիչ ձևերը նա մոտենում է այն նոր գրականությանը, որ մենք ունեցանք հետագա տասնամյակներում: Սոսը սիրում է Սոնդիպին, սիրում ամենաշերմ ու անկեղծ սիրով: Նա իր անկեղծ սիրում վկայակոչում է Շամիրամին, Պարիսին, Պերամին և այլն: Այստեղ արդեն մեր առաջ պատկերանում են հին հունական աստվածները՝ Պերում-Պրիամոսի որդի Պարիսը, որը որպես դատավոր եկավ Հերալի, Աթենասի և Աստղիկի միջև որոշելու, թի ո՞վ է նրանցից արժանի ոսկի խնձորին: Մեր առաջ է մի ամբողջ համաստեղություն աստվածների:

«Թող ինք Շամիրամ

Որ զայս Հայաստան,

Ի խնդիր խանդին՝

Ողողեաց յարեան:

Կամ դէպ Պարիսյ

Ընդ իր Հեղինեայ...

Եվ ապա

Սամիփոն, Դալիլա

Պերամ ընդ Թաղեա

Եւ բիւրք ընդ նոսին

Թող լիցին վկայ»:

«Սոս և Սոնդիպի» պոեմի լեզուն վերամբարձ է: Սոսը, որ Վահեվահյան տոնի ժամանակ հուզվում է մտատանջության մեջ առանձնացած, չէր մասնակցում տոնախըմ-

բովյանը և խրախճանքին, հանկարծ տես-  
նում է Աստղիկ աստվածություն:

«Ողջոյն ֆեզ», — ասաց,

Դժխոյ լուսերես:

Թէ հողեղին ես, ի՞մ ալրիան փայլես,

Եւ թէ երեղին՝

Ուստի մարմին ֆեզ»,

Ասաց պատաճին:

Եւ զոյգ ընդ ձայնին՝

Հպէր ի համբարյ

Այսուց Անմահին: (էջ 14).

Թաղիադյանը միտումավոր կերպով Սոսի  
բերանում դրել է հարուստ, բայց ոչ վերամ-  
բարձ լեզու: Այնինչ աստվածություն՝ Աստղիկի:  
ոճը վերամբարձ է, շեշտավոր և հրամայա-  
կան: Այդ բովյան նա ասում է.

«Ենձ հուզ մատչես ցաւ,

Ժպիրն մահացու,

Ում ծերին ասուածք

Քո երկրապագու» (էջ 15):

Սոսը շատ տեղերում արտահայտվում է  
ժողովրդական լեզվով, հանգերով, ինչպես  
նաև նմանահնչուությամբ: Այսպիսս՝

«Մին՝ այսպէս խունչիկ

Մին՝ այնպէս մենչիկ.

Մին նազ նազելով»

Գործ առնէ ներիք» (էջ 16):

Սոսի համամարդկային զգացմունքները  
բավական խորն են: Նա ինչ երազում է Հար-  
յաստանի համար, նույնը նրազում է Հընդ-  
կաստանի համար: Նա ներքին որդերու-  
թյուն է ապրում, լսելով հնդիկ ժողովրդի  
կրած վիշտն ու տառապանքները, որ պատ-  
ճառում են մի խումբ անհատներ իրենց  
ցանկություններին բավարարություն տալու  
համար:

«Որք զաշխարհ հնդկաց

Քամեցին յարեանց

Լոկ վասն լիտի

Ցանկութեանց իւթեանց»:

Թաղիադյանի ստեղծագործության վրա  
ազգել են նաև կլասիկ հունական գործները:  
Այդ երևում է կլասիկ Վահեվահյան տոնի  
նկարագրության մեջ:

Կլասիցիզմի ազգեցությունը նկատելի է  
նաև Թաղիադյանի «Առեղծ Աքրոդիտայ և  
Բեզոնի լիմարի» բանաստեղծության մեջ, որ  
գրված է Կալկաթայում: Այս բանաստեղծու-  
թյունը գրելիս հեղինակը որպես նյութ օգ-  
տագրծել է անտիկ գրականությունը: Թա-  
ղիադյանի այս բանաստեղծության հերոսու-  
հի Աքրոդիտան փոսում է բարձր, վերամ-  
բարձ ոճով, հարուստ լեզվով:

«Ուսաց, դժնեայդ Հեփեսես,  
Մընու դարբին սեերես,

Զի քո բաժին է դարբնոց

Եւ ոչ ենշտալին իմ ծոց».. (էջ 66):

Այս բանաստեղծության մեջ գործում են  
նաև Աքրոդիտան, Անգելը, Մուզան, Բեղոն  
Հեփեստացիալը և այլք:

Թաղիադյանի այս բանաստեղծության մեջ  
գործածված դիցարանական անունները՝ ինչ-  
պես Աքրոդիտե, Անգել, Հիմեն և այլն, գրժ-  
վար հասկանալի են դիցարանության անծա-  
նոթ ընթերցողի համար:

Թաղիադյանը մեռավ օտարության մեջ:  
Ժամանակակիցները նրան շգնահատեցին  
նրա կենդանի ժամանակի: Միայն մահից հե-  
տո նրան ըստ արժանվույն գնահատեցին  
Միքայել Նալբանդյանը և Ստեփանոս Նա-  
զարյանը նա այն լուսավոր փարոսն էր,  
որից լույս էր առնում ապագա տասնամ-  
յակների հայ հասարակությունը և այն ճա-  
նապարհի սկիզբն էր, որը ձգվում էր մինչև  
Աբովյան:

Նպատակ տևնենալով լուսավորել ժողովր-  
դին՝ Թաղիադյանը գտավ միայն գրականու-  
թյան աշխարհիկ բովանդակությունը, բայց  
անկարող եղավ հաղթահարելու գրաբարը,  
որը գրականությունը ժողովրդի սեփականու-  
թյունը դարձնելու, նրա շահերին ծառայեց-  
նելու տեսակետից՝ ամենամեծ խոշքնդոտն  
էր: Ժամանակի այդ մեծ պահանջը Թա-  
ղիադյանը լրացրեց: Թաղիադյանի ստեղ-  
ծագործության թույլ կողմն է այդ Դրա վրա  
առանձին տաշարություն է դարձրել Միքայել  
Նալբանդյանը, որը մեծ կարծիք ուներ Թա-  
ղիադյանի մասին: Նալբանդյանը զարմա-  
նում էր, որ եվրոպական կրթություն ստա-  
ցած Թաղիադյանը, լուսավոր գաղափարնե-  
րի տեր մարդ, գործածելով «Հին և մեռած  
լիզոն», չի հասկացել, որ, «իսոսելու կամ  
գրելու խորհուրդը այն է, որ ժողովուրդը  
կարդա և բան հասկանա»:

Միթթարյանները ձգտում էին վերականգ-  
նել հինգերորդ դարի ուկեղենիկ գրաբարը:  
Այդպիսի մի փորձ արավ նաև Թաղիադյանը  
«Սոս և Սոնդիպի» պահմում: Թաղիադյանը,  
երբեմն միայն անդրադառնալով ժողովրդա-  
կան լեզվին՝ միշտ հարազատ մնաց գրաբա-  
րին: Բայց Թաղիադյանի գրաբարը Միթթա-  
րյանների խրթին լեզուն չէր: Նրա գրաբարը  
ավելի պարզ էր, ժողովրդին ավելի հասկա-  
նալի:

Այս բոլորով հանդերձ, Թաղիադյանի  
ստեղծագործության արժեքը բավական մեծ  
է: Նրա մի շարք բանաստեղծությունները  
մեծ ավանդ են հայ գրականության ուկե-  
ֆոնում: Նրա անոնքը հավիայանս սիրելի  
կմնա հայ սրբտերում:

Շ. Էդ.